

ՈՒՉԱՐԴ ԴԸ ԲԵՐԻՆ՝ ՀԱՆՐԱՀԱՅՏ ԳՐԱՄԵՐԸ XIV ԴԱՐԻ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Մ. Ի. ՍՈՒՐՍԱՎԱ (ԹԲԻԼԻՍԻ)

Անգլիայի պատմության մեջ XIV դարն ազգային մշակույթի վերածննդի ու լինելիության ժամանակաշրջանն է: Եկեղեցին աստիճանաբար կորցնում էր միջնադարյան հոգևոր կյանքը կառավարելու իր մեծաշնորհ դիրքը: Մշակույթն սկսում է զարգանալ և եկեղեցուց անկախ, նոր պայմաններում եկեղեցական գրադարանների կողքին հանդես են գալիս հատուկ դպրոցների և համալսարանների գրադարաններ: Միջնադարյան հասարակության առանձին խավերի կրթվածության ցուցանիշ էին մասնավոր գրադարանները, որոնցից շատերը ժամանակի ընթացքում վերածեցին պետական գրադարանների: Միջնադարյան Անգլիայում գրադարանները հիմնականում մասնավոր հավաքածուներ չէին, այլ պատկանում էին վանքերին, եկեղեցական կազմակերպություններին, իսկ ավելի ուշ՝ համալսարանական քոլեջներին¹: Իսկ մասնավոր հավաքածուները հազվագյուտ էին և ըստ էության առանձնապես մեծ չէին: Դրանք գերազանցապես պատկանում էին այն մարդկանց՝ հոգևորականներ, իրավաբաններ, ուսուցիչներ, ովքեր ստիպված էին շատ քե քիչ հաճախակի դիմելու գրքին:

Հոգևորականներից սեփական գրքեր հիմնականում ունեին և կարող էին ունենալ եպիսկոպոսները և վանահայրերը, բայց նրանցից մեզ հասած հավաքածուները շատ համեստ են. դրանցում հազվադեպ են հանդիպում այնպիսի գրքեր, որոնք չունեն աստվածաբանական կամ իրավաբանական բնույթ²: Բոլոր դեպքերում հենց եպիսկոպոսներն ու վանահայրերն էին, ըստ էության, XIV դ. առաջին կեսին հասարակության համեմատաբար ամենից կրթված խավը:

Այդ ժամանակվա սակավաթիվ իսկական գրքահավաքներից մեկն էր դարեմյան եպիսկոպոս Ռիչարդ դը Բերին (1281-1345), որը պատիվ ունի լինելու Անգլիայում մեզ հայտնի գրքասերներից առաջինը: Նա ծնվել է Բերի Սենտ Էդմունդսում, սովորել է Օքսֆորդում, այնուհետև դարձել բենեդիկտյան կրոնավոր: Նա եղել է ապագա թագավոր Էդուարդ III-ի դաստիարակը, զբաղեցրել պետական մի շարք բարձր պաշտոններ՝ կանցլեր և արքունի գանձապետ, 1333 թ. դարձել դարեմյան եպիսկոպոս: Վայելելով թագավորի բարեհաճությունը՝ Բերին դիվանագիտական հանձնարարություններ է կատարել Ֆրանսիայում, Գերմանիայում, Հոլանդիայում: Երկու անգամ եղել է Իտալիայում՝ պապական պալատում: Մասնակցել է նաև 1342 թ. Շոտլանդիայի հետ հաշտության կնքմանը: 30-ական թվականներին Ավինիոնում հանդիպել է Պետրարկայի հետ, որը նրա մասին արտահայտվել է գովասանքով: Դը Բերին հայտնի է եղել իր գրադարանով, որը կտակել է Օքսֆորդի համալսարանին, և գրքերի մասին «Ֆիլոբիբլոն» տրակտատով:

Դը Բերիի գրադարանը եղել է շատ հարուստ, այնտեղ հաշվվում էր 1500 հատրդ և, եթե այդ թիվը ճիշտ է, ապա XIV-XV դդ. Անգլիայում այն չուներ իրեն հավասարը: Նրա գրացուցակը, ցավոք, չի պահպանվել: Իր բոլոր գրքերը կտակելով Օքսֆորդի համալսարանին՝ դը Բերին գրել է «Ֆիլոբիբլոնը», հավանաբար, իբրև այդ գրադարանից օգտվելու ուղեցույց: Այն եղել է Անգլիայում առաջին մասնագիտական-գրքասիրական երկը: Դը Բերին Անգլիայում առաջին անգամ ցույց տվեց, որ գրքերը կարող են և պետք է դառնան գրականության առարկա:

«Ֆիլոբիբլոնը» չափազանց հետաքրքիր աշխատություն է: Նախաբանը և քսան հա-

¹ Տե՛ս Fr. Wormald, The monastic Library. «The English Library before 1700», London, 1958, էջ 22:

² Տե՛ս R. Weiss, The Private Collector and the Revival of Greek Learning, էջ 112:

մատոտ գլուխներն առաջին հայացքից թվում են բովանդակությամբ խայտաբղետ, մինչդեռ ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանք միավորվում են մեկ ամբողջության մեջ: Նախաբանում դը Բերին գրում է. «Գրքերի հանդեպ հիացմունքն ինձ համակել է այնքան ուժգին, որ երկրային մյուս բաները դուրս են մնացել իմ տեսադաշտից, և ինձ վրա իշխում է գրքեր հավաքելու կիրքը»³: Գրքահավաքությունը բնորոշ երևույթ չէր, և դը Բերին ինքն է նշում դրա անսովորությունը⁴: Դը Բերին 1333 թ. եպիսկոպոս ձեռնադրվելուց դեռ շատ առաջ, համակել էր գիրք հավաքելու, փնտրելու և ձեռք բերելու կիրքը:

Լինելով Իտալիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում՝ նա ոչ միայն ջանում է այնտեղ իր համար նոր գրքեր գտնել, այլև այցելում է այդ երկրների մատենադարաններ, ծանոթանում դրանց հարստությանը և հիանում դրանցով: Այցելությունները նրան բերում էին նորանոր գրքեր՝ որպես հատուցում կրած դժվարությունների:

Անգլիայում նա ձգտում է օգտագործել յուրաքանչյուր հնարավորություն՝ համալրելու իր գրադարանը: Նա ստանում է թագավորի թույլտվությունը վաճառելու, եկեղեցիներում, եկեղեցական ծխերում գրքեր որոնելու համար: Խիստ ուշագրավ է, թե ինչպիսի նորախոսքայամբ է նա հայտնում լույս աշխարհ բերած փոշեծածկ հատորների մասին, որոնք հաճախ լինելով մկնակերված, իր համար պարզապես անգին էին: Դը Բերին ոչ միայն որոնում է հին գրքեր, այլև նրա ցանկությամբ պատրաստում են նրան հետաքրքրող գրքերի ցուցակներ: Գրիչները, մանրանկարիչները, կազմարարները և գրքի մյուս վարպետները մշտապես նրա տրամադրության տակ էին:

Գարեմյան եպիսկոպոսի հրապուրանքը քաջ հայտնի էր նրա շրջապատում: Հավանաբար նա ոչ քիչ գրքեր է ստացել այս կամ այն կարգի եկեղեցական գործերում՝ երբեմն խիստ մտալք տարաբնույթ ծառայություններ մատուցելու համար: Այսպես; օրինակ, Մենտ Օլբանի վանքի վանահայր Ուոլսինգեմի վկայությամբ ինքը դը Բերին վաճառել է շուրջ 40 գիրք՝ եկեղեցուց վտարվածներից աքտրելու իրավունք ստանալու դիմաց:

Դը Բերին գրքեր է գնել իր հայրենիքում, այլ երկրներ այցելելի ժամանակ, անգամ իսկ արտասահմանից պատվիրելու ճանապարհով: Հարկավ նա չէր կարող հավաքել այդպիսի մեծ գրադարան միայն իր սեփական միջոցներով՝ առանց օգնականների: Գրքերի որոնման գործում նա ընդգրկում է մտրացիկների միաբանության վանականներին և իր այդ օգնական-վանականների մասին արտահայտվում է չափազանց համակրալից: Դա չի խանգարում, սակայն, որ հաճախ, բարկանա վանականների վրա և դատապարտի վանականներին գրքերի հետ վատ վարվելու համար: Ընդհանուր առմամբ Ռիչարդը դը Բերին իր գրադարանը մեծացնելու համար օգտագործում էր ցանկացած հնարավորություն:

Գրքի ինքնամոռաց սիրահար Ռիչարդը դը Բերի գրասերը միաժամանակ նաև լուսավորիչ է, որը փորձում է այդ սերը փոխանցել նաև ուրիշներին, նրանց հաղորդակից դարձնել գրքերին, ինչպես սիրում էր ասել «իմաստության անգին գանձերին»: Գիրքը, նրա խորին համոզմամբ, իմաստության, գիտելիքի և անցյալի մասին հիշողության պահապանն է:

«Ֆիլոբլոնի» գլուխներից մի քանիսը շարադրված է հենց գրքերի անունից: Դրանցում հեղինակը մեկնացնում է բոլոր նրանց, ովքեր վատ են վարվում գրքերի հետ, ովքեր չեն հասկանում դրանց արժեքը՝ հատկապես մտրացող եղբայրների, վանականների ու կղերականների: Հարկավ, դը Բերին գրքի նկատմամբ ունեցած ակնածալից վերաբերմունքի դեպքում, ովքեր չունեն մնացած գագաթում, արժանի են խիստ դատապարտման: «Տեսեք, - ասում է նա; - չէ որ գրքերը ձեր դրության ստեղծողներն են, իսկ առանց դրանց, իհարկե, մյուս հովանավորները ձեզ հուսախաբ կանեին»:

Որպես կրթյալ մարդ, եպիսկոպոս դը Բերին չէր կարող չձգտել հոգևորականության գրագիտության բարձրացման, չատել տգիտությունը, որն այն ժամանակ արդեն դարձել էր ավանդական: Նա բոլոր կալուկավորներին համառորեն խորհուրդ էր տալիս սիրել գիրքը: Նա իր գրադարանը թողնում է Օքսֆորդի ուսանողներին և իր գեղեցկախոսության բոլոր միջոցներով ջանում է համոզել նրանց խնամել գիրքը: Գրքի հանդեպ ենթադրյալ անփութ վերաբերմունքը նրան նախապես հուսահատեցնում է: Որոշ գրքեր դը Բերին ձեռք է բերում հենց ուսանողների համար: Օրինակ՝ հունարենի և հինհրեներենի քերականություններ, ո-

³ «The Philobiblon of Richard de Bury». Transl. by A. West. New-York, 1945, p. 7.

⁴ Տե՛ս Կ. Բ. Симо́н, История иностранной библиографии, М., 1963.

րոնք, նրա կարծիքով, անհրաժեշտ են լատիներենը և ս. Գիրքը լավ յուրացնելու համար:

Ալեհայտ է «Ֆիլոբիբլոնի» լուսավորական բնույթը, բայց հաճախ գիտելիքի և ընթերցանության մասին դը Բերիի դատողությունները ձեռք են բերում բարոյախոսական երանգ: Նա խոսում է գրքի միջոցով հոգու փրկության հնարավորության, ընթերցանությամբ արատներից ազատվելու, մարդու բնությունն ուղղելու մասին: Հատկապես քարոզչական են հնչում հանուն գրքի երկրային գործերը և, իհարկե, հարստությունը մոռանալու մասին: «Թող ոչ ոք չժառայի գրքերին և մամոնային», - գրում է նա:

«Ֆիլոբիբլոնը» հարուստ է նման արտահայտություններով: Ըստ երևույթին դրանք սովորական են քրիստոնեական առաքինության քարոզչի ոճի համար: Դը Բերիի համար աշխարհիկ գործերից հրաժարվելու քարոզը զուգակցվում էր, ինչպես հայտնի է, ակտիվ գործունեության հետ, որը համապատասխանում էր ժամանակի ոգուն:

«Ֆիլոբիբլոնը» ընկալվում է ոչ թե որպես ի դեկլարություն գրադարանից օգտվելու, այլ, որոշ իմաստով, որպես հանրագումար ողջ կյանքում սիրած գործի, դրա նշանակության ապացույց: Այդ երկի մանրամասն վերլուծությունը կարող է ի հայտ բերել բազմաթիվ այլ հետաքրքիր տեղեկություններ, բայց մեզ համար այն ամենից առաջ կարևոր է որպես XIV դ. անգլիական հասարակության բարձր խավի ներկայացուցիչներից մեկի արտասովոր կրթվածության վկայություն: Էական է և այն, որ դա մատենագիտական-մատենասիրական առաջին ստեղծագործությունն է Անգլիայում՝ ինքնին վերցրած ուշագրավ մի փաստ, որը կարևոր է տվյալ ժամանակաշրջանի անգլիական մշակույթի բնութագրման համար:

М. И. СУРМАВА (Тбилиси) - Ричард де Бери - известный библиофил в Англии XIV века. - В истории Англии XIV века Ричард де Бери один из немногих настоящих собирателей книг. Свою библиотеку, в которой насчитывается 1500 томов, он завещал Оксфордскому университету.

Де Бери и сам написал сочинение, которое называется "Филобиблон". Это первое библиографическое-библиофильское произведение в Англии.